# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32
Հեռ. ( 0237) 2-36-54

Ի պատասխան Ձեր ____________ N________

07.12.11թ. N 1288

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում են Արմավիրի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ին կայացած թիվ 13 նիստի որոշումները:

Առդիր՝ 26 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

«07» 12 2011 թ.

Կատ.՝ Ս. Մովսիսյան

հեռ.՝ 2 38 69

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 24 » նոյեմբերի 2011 թվականի N 123

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից՝

2011 թվականի նոյեմբերի 25-ի ավագանու հերթական նիստը տեղափոխել ս/թ նոյեմբերի 30-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

20 11 թ. նոյեմբերի 24
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 97 -Ա

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Արմավիրի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 13 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Չիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ
## ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ

30.11.2011թ.
ժամը 11⁰⁰

1. Արմավիրի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 147- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ.՝ Ա. Գրիգորյան

2. Արմավիրի քաղաքային համայնքի 1-12 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ների պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

Զեկ.՝ Ա. Գրիգորյան

3. Արմավիրի քաղաքային համայնքի ենթակայության մսուր-մանկապարտեզներում մեկ երեխա օրվա սննդի ծախսի սահմանման մասին:

Զեկ.՝ Ա. Գրիգորյան

4. * 2012թ. նախադպրոցական հիմնարկների երեխաների պահպանման վարձի և զեղչերի սահմանման մասին:

Զեկ.՝ Ա. Գրիգորյան

5. Արմավիրի քաղաքային համայնքում վարձավճարների, տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերի սահմանման մասին:

Զեկ.՝ Ա. Աբգարյան
Ա. Սարգսյան

6. Արմավիրի քաղաքային համայնքին պատկանող Հանրապետության 33 հասցեում գտնվող նկուղը ուղիղ վաճառքով Սուրեն Աբրահամյանին օտարելու մասին:

Զեկ.՝ Ա. Աբգարյան

7. Անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Զեկ.՝Մ. Կոստանյան

8. * Անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Զեկ.՝ Մ. Կոստանյան

9. Անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

Զեկ.՝ Մ. Կոստանյան

10. Անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

Զեկ.՝ Մ. Կոստանյան

11. Քաղաքային համայնքին պատկանող Արարատյան փողոցի թիվ 5 մսուր-մանկապարտեզի տարածքից 450քմ. մակերեսով հողամասը օտարելու մասին:

Զեկ.՝ Ա. Աբգարյան

12. Գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին:

Զեկ.՝ Հ. Թովմասյան

13. Օգնություն հատկացնելու մասին:

Զեկ.՝ Տ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » դեկտեմբերի 2011 թվականի N 98 - Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 147-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի 29.11.2011թ. թիվ 992 զեկուցագիրը, Քաղաքաշինության և բնակ. կոմունալ հարցերի բաժնի պետի 29.11.2011թ. թիվ 987 զեկուցագիրը, «Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցեր»-ի բաժնի պետի 24.11.2011 թիվ 970, 971, 972 զեկուցագրերը և ընդառաջելով ՀՀ Արմավիրի մարզի «Նաիրի» ՀԵԾ հասարակական կազմակերպության 29.11.2011թ. թիվ 991 գրությանը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Արմավիրի քաղաքային համայնքի ավագանու 24.12.2010թ. թիվ 147- Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն N 1, N 2, N3 հավելվածի.

1) Արմավիրի քաղ. համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից 2458.0 հազար դրամ հատկացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի ծախսերին , որից՝ 1908.0 հազար դրամ «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին՝ թվով 1060 երեխաների համար ամանորի տոպրակներ գնելու նպատակով, 550.0 հազ. դրամ «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» 4819 հոդվածին՝ ՀՀ Արմավիրի մարզի «Նաիրի» ՀԵԾ հասարակական կազմակերպությանը նվիրատվություն.

2)Արմավիրի քաղ. համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից 443.0 հազար դրամ հատկացնել «Բարեկարգում» տնօրինության «Փողոցների լուսավորում» 06 բաժնի 4 խմբի 1 դասի ծրագրի ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածին՝ Շահումյան փողոցի Սահմանապահներ-Թումանյան հատվածի լուսավորության ցանցի համար նյութերի գնման նպատակով:

3)Արմավիրի քաղ. համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից 2600.0 հազար դրամ հատկացնել 08 բաժնի 2 խմբի 4 դասի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածին՝ ամանորյա միջոցառումը պատշաճ անցկացնելու համար:

4) Արմավիրի քաղ. համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից 925.0 հազար դրամ հատկացնել «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» 10 բաժնի 7 խմբի 1 դասի ծրագրի ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածին, որից՝ 250.0 հազ դրամ ՝ 50.0 հազար դրամ միանվագ գումար հատկացնել 1 լավագույն մարզիչին, 20.0 հազարական դրամ 10 լավագույն մարզիկներին, 675.0 հազ դրամը Արմավիր քաղաքում ապրող պատվավոր քաղաքացիներին՝ յուրաքանչյուրին 75.0 հազարական դրամ:

5) Արմավիրի քաղ. համայնքի 2011թ. բյուջեի «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 11 բաժնի 1 խմբի 2 դասի նախատեսված ծախսերի «պահուստային ֆոնդ» 4891 հոդվածի ծախսերը պակասեցնել 6426.0 հազ. դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Անտոնյան Ս. | | |
| Ավագյան Ս. | | |
| Ավդալյան Լ. | | |
| Բաղդասարյան Մ. | | |
| Խսրայելյան Է. | | |
| Հարությունյան Լ. | | |
| Ղազարյան Է. | | |
| Մարգարյան Ռ. | | |
| Շիրվանյան Գ. | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

[illegible]ՎԱԾ N 1
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. [illegible] 30-Ի
ԹԻՎ [illegible]3 [illegible] ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 2

## ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | *Բաժին* | *Խումբ* | *Դաս* | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | *X* | *X* | *X* | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 0,0 | 0,0 | 0,0 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) [illegible] | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| 2160 | 01 | 6 | 0 | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից`* | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| **2600** | **06** | **0** | **0** | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ **(տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660), այդ թվում`** | 443,0 | 443,0 | 0,0 |
| **2640** | **06** | **4** | **0** | ***Փողոցների լուսավորում, որից`*** | 443,0 | 443,0 | 0,0 |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 443,0 | 443,0 | 0,0 |
| **2800** | **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ **(տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860), այդ թվում`** | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| **2820** | **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ, որից`* | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| **3000** | **10** | **0** | **0** | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ **(տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090), այդ թվում`** | 925,0 | 925,0 | 0,0 |
| **3070** | **10** | **7** | **0** | ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից`*** | 925,0 | 925,0 | 0,0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 925,0 | 925,0 | 0,0 |
| **3100** | **11** | **0** | **0** | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110), այդ թվում`** | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| **3110** | **11** | **1** | **0** | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից`*** | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -6426,0 | -6426,0 | 0,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ԹԻՎ 98-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՎԵԼՎԱԾ 3

## ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5 +ս.6) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | 0,0 | 0,0 | |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4210+տող4220+տող4230+տող4240+տող4250+տող4260) | x | 4951,0 | 4951,0 | X |
| 4260 | *ՆՅՈՒԹԵՐ* (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265+տող4266+տող4267+տող4268) | x | 2351,0 | 2351,0 | X |
| 4267 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 443,0 | 443,0 | X |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 1908,0 | 1908,0 | X |
| 4600 | *1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ* (տող4610+տող4630+տող4640) | x | 925,0 | 925,0 | X |
| 4630 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)* (տող4631+տող4632+տող4633+տող4634) | x | 925,0 | 925,0 | X |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 925,0 | 925,0 | X |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770) | x | -5876,0 | -5876,0 | 0,0 |
| 4710 | *ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ* (տող4711+տող4712) | x | 550,0 | 550,0 | X |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 550,0 | 550,0 | X |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող4771) | x | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | 0,0 | 0,0 | |

ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 98-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 6

### ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կ.Տ.

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 0,0 | 0,0 | 0,0 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| 2160 | 01 | 6 | 0 | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 2458,0 | 2458,0 | 0,0 |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | 0,0 | 0,0 | |
| | | | | հատ.նպ. այլ նյութեր 4269 | 1908,0 | 1908,0 | 0,0 |
| | | | | նվիրատվ. այլ շահույթ չհետապ. կազմ.-ին 4819 | 550,0 | 550,0 | 0,0 |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660) | 443,0 | 443,0 | 0,0 |
| 2640 | 06 | 4 | 0 | *Փողոցների լուսավորում* | 443,0 | 443,0 | 0,0 |
| *2641* | *06* | *4* | *1* | *Փողոցների լուսավորում* | 443,0 | 443,0 | 0,0 |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | 0,0 | 0,0 | 0,0 |
| | | | | կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 | 443,0 | 443,0 | 0,0 |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| 2820 | 08 | 2 | 0 | *Մշակութային ծառայություններ* | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| *2824* | *08* | *2* | *4* | *Այլ մշակութային կազմակերպություններ* | 2600,0 | 2600,0 | 0,0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090) | 925,0 | 925,0 | 0,0 |
| 3070 | 10 | 7 | 0 | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)* | 925,0 | 925,0 | 0,0 |
| 3071 | 10 | 7 | 1 | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)* | 925,0 | 925,0 | 0,0 |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | 0,0 | 0,0 | 0,0 |
| | | | | այլ նպաստներ 4729 | 925,0 | 925,0 | 0,0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -6426,0 | -6426,0 | 0,0 |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | 0,0 | 0,0 | 0,0 |
| | | | | պահուստային միջոցներ 4891 | -6426,0 | -6426,0 | 0,0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 99 - Ա

«ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 6 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 8 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 9 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 10 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 11 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 12 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26 կետով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 1 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 2 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ», «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ», «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 5 մսուր- մանկապարտեզ», «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 6 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 7 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 8 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 9 մսուր - մանկապարտեզ », «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 10 գիշերօթիկ մսուր - մանկապարտեզ», «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 11 մսուր - մանկապարտեզ» և «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 12 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Խսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Սարգսյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի քաղհամայնքի ավագանու
2011թ. Նոյեմբերի 30-ի թիվ 13 նիստի
թիվ 99-Ա որոշման

| | Պաշտոնային անվանումը | 1 միավորի պաշտոնային դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 75000 |
| 2 | մեթոդիստ | 68000 |
| 3 | ֆիզկ. հրահանգիչ | 66000 |
| 4 | Հաշվապահ | 50000 |
| 5 | Բուժ. քույր | 33000 |
| 6 | Տնտեսվար | 33000 |
| 7 | Երաժիշտ | I կարգ - 67000*<br>II կարգ - 66000*<br>III կարգ - 65000* |
| 8 | Դաստիարակ | I կարգ - 67000*<br>II կարգ - 66000*<br>III կարգ - 65000* |
| 9 | Դաստիարակի օգն. | 32500 |
| 10 | Սանհտար - դայակ | 32500 |
| 11 | Գիշերային դայակ | 32500 |
| 12 | Գործավար | 33000 |
| 13 | Խոհարար | 32500 |
| 14 | Խոհարարի օգն. | 32500 |
| 15 | Լվացարար | 32500 |
| 16 | Էլեկտրամոնտյոր | 32500 |
| 17 | փականագործ | 32500 |
| 18 | Պահակ | 32500 |

*Մանկավարժական աշխատողների կարգերի տարբերակման չափանիշները՝

I կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ.

II կարգ՝ բարձրագույն կրթություն և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ,կամ միջն. մասնագիտական կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ.

III կարգ՝ բարձրագույն կրթություն և մինչև 1տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ,կամ միջն. մասնագիտական կրթություն և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ.

Թերի բարձրագույն կրթությամբ մանկավարժական աշխատողի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է միջն. մասնագիտական կրթություն ունեցող մանկ. աշխատողի համար սահմանված պաշտոնային դրույքի չափով, իսկ ընդհանուր միջն. կրթությամբ մանկ. աշխատողի պաշտոնային դրույքաչափը՝ միջն. մասնագիտական կրթություն ունեցողից պաշտոնային դրույքաչափից 5 %-ով պակաս:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## ՈՐՈՇՈՒՄ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 100 - Ն

### ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՄԵԿ ԵՐԵԽԱ ՕՐՎԱ ՄՆՆԴԻ ԾԱԽՍԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Արմավիրի քաղաքային համայնքի ենթակայության մսուր-մանկապարտեզներում 1 երեխա - օրվա սննդի միջին ծախսը սահմանել 275 դրամ, գիշերող 1 երեխա - օրվանը՝ 350 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ափդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2011 թվականի N 101 - Ն

## 2012Թ. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԶԵՂՉԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 19 կետով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համայնքի մանկական նախադպրոցական հիմնարկներում յուրաքանչյուր երեխայի հաշվարկով պահպանման վարձ սահմանել ամսական 6000 դրամ:
2. Սահմանել մ/մանկապարտեզներում ընդհանուր վարձավճարի մինչև 10 %-ի չափով զեղչ,
2.1. այդ թվում՝ 100%-ով՝
 ա) միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին,
 բ) գիշերող երեխաներին,
2.2. 50 % զեղչ՝
 ա) միայնակ մայրերի երեխաներին
 բ) միևնույն մանկապարտեզ հաճախող երեք և ավելի երեխաներից 1-ին
 գ) 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող մայրերի մ/մանկապարտեզ հաճախող 2 երեխաներից 1 - ին:
3. Թիվ 10 մ/մանկապարտեզում զեղչը կիրառել գիշերող երեխաների թիվը հանելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1 – ից:

| Կողմ (8) | Դեմ (1) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Անտոնյան Ս. | Ավդալյան Լ. | |
| Ավագյան Ս. | | |
| Բաղդասարյան Մ. | | |
| Խարայելյան Է. | | |
| Հարությունյան Լ. | | |
| Ղազարյան Է. | | |
| Մարգարյան Ռ. | | |
| Չիլինգարյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 102 - Ն

### ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության վարձավճարները 2012թ. սահմանվում են տարեկան 1քմ հաշվարկով, որը համայնքի տարածքում միասնական է և անփոփոխ ընթացիկ տարվա համար, որից՝

ա) բնակելի շենքերի ոչ բնակելի մակերեսների, առանձնացված շենքերի մասերի և առանձնացված շենքերի համար՝ 2000 դրամ,

բ) կիսանկուղների համար՝ 600 դրամ,

գ) նկուղների համար 500 դրամ:

2. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝

| ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ |
|---|---|
| 1. * Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| հիմնական օբյեկտների համար՝ | |
| ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 15000 |
| բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 30000 |
| բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 50000 |
| բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 70000 |
| ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 3000 |
| դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 5000 |
| 2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, երբ | |

| | |
|---|---|
| սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3000 |
| բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով. | |
| գ) նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | |
| 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ | 5000 |
| 4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 10000 |
| բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 10000 |
| 5. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ | 350 |
| բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 150000 |
| 6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի, կազմակերպման օբյեկտների, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | |
| ա) առևտրի օբյեկտների համար՝ | 25000 |
| բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 100000 |
| գ) բաղնիքների (սաունաների) համար՝ | 200000 |
| դ) խաղատների կազմակերպման համար՝ | 500000 |
| ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 250000 |
| զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 100000 |
| 7. Քաղաքային համայնքի տարածքում, համաքաղաքային կանոններին համապատասխան՝<br>ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 100 |
| 8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատրության համար 1 քմ տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 1000 |
| բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2500 |
| գ) այլ արտաքին գովազդի համար՝ | 500 |

| | |
|---|---|
| դ) ղատարկ գովազդային վահանակների համար՝ | 700 |
| 9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 100 |
| 10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 15000 |
| 11. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է | 50000 |
| 12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարու թյան ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 10000 |
| 13. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 10000 |
| 14. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ | 5000 |
| 15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչի համար ամսական. | 100 |
| 16.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար . | |
| ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ | 1500 |
| բ) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը | 5000 |

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Ս.

Ավագյան Ս.

Ավդալյան Լ.

Բաղդասարյան Մ.

Իսրայելյան Է.

Հարությունյան Լ.

Ղազարյան Է.

Մարգարյան Ռ.

Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 103 - Ա

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԿՈՒՂԸ ՈՒՂԻՂ ՎԱՃԱՌՔՈՎ ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16- րդ հոդվածի առաջին մասի 20 կետով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն քաղաքային համայնքին պատկանող Հանրապետության փող. թիվ 33 հասցեում գտնվող, Սուրեն Աբրահամյանի կողմից վարձակալած 239.8 քմ մակերեսով նկուղը ուղիղ վաճառքի եղանակով օտարելու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 104 - Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-689 հոդվածներով և հիմք ընդունելով «Միացյալ հայկական կազակական ուժերի միասնություն» հասարակական կազմակերպության նախագահ կազակական զորքերի գեներալ-լեյտենանտ Ն. Թորոսյանի 07.10.2011թ. թիվ 843 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիրի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Արմավիր քաղաքի Չարենցի փողոցի թիվ 26 հասցեում գտնվող թիվ 8 մսուր-մանկապարտեզի վարչական շենքից 47.6 քմ ընդհանուր մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Միացյալ հայկական կազակական ուժերի միասնություն» հասարակական կազմակերպությանը:
2. «Միացյալ հայկական կազակական ուժերի միասնություն» հասարակական կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման իրավունքի պայմանագիր 10 տարի ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Մ.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » Նոյեմբերի 2011 թվականի N 105 - Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-689 հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հուլիսի 28-ի թիվ 29 արձանագրությունը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիրի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Արմավիր քաղաքի Արովյան փողոցի թիվ 137 հասցեում գտնվող վարչական շենքից 908.7 քմ ընդհանուր մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել տարածքի անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 106 - Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-613, 618 հոդվածներով և հիմք ընդունելով «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ Գ. Ազոյանի 24.11.2011թ. թիվ 969 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիրի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Արմավիր քաղաքի Արովյան փողոցի թիվ 137 հասցեում գտնվող վարչական շենքից 36.6 քմ ընդհանուր մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով տրամադրել «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությանը:
2. «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության հետ կնքել տարածքի վարձակալության իրավունքի պայմանագիր 5 տարի ժամկետով, տարեկան 1 քմ համար 2000 ՀՀ դրամ վարձավճարով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » սեպտեմբերի 2011 թվականի N 107 - Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-613, 618 հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանի 24.08.2011թ. թիվ 726 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիրի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Արմավիր քաղաքի Աբովյան փողոցի թիվ 137 հասցեում գտնվող վարչական շենքից 103.2 քմ ընդհանուր մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով տրամադրել Հայաստանի երիտասարդական հիմնադրամին:

2. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ կնքել տարածքի վարձակալության իրավունքի պայմանագիր 5 տարի ժամկետով, տարեկան 1 քմ համար 2000 ՀՀ դրամ վարձավճարով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Անտոնյան Ս.
Ավագյան Ս.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան Գ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 108 - Ա

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 5 Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔԻՑ 450.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20 կետով.

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն քաղաքային համայնքին պատկանող Արարատյան փող. թիվ 5 մսուր-մանկապարտեզի տարածքից 450.0 քմ մակերեսով հողամասը օտարելու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Անտոնյան Ս. | | |
| Ավագյան Ս. | | |
| Ավդալյան Լ. | | |
| Բաղդասարյան Մ. | | |
| Իսրայելյան Է. | | |
| Հարությունյան Լ. | | |
| Ղազարյան Է. | | |
| Մարգարյան Ռ. | | |
| Շիրվանյան Գ. | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2011 թվականի N 109 - Ա

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2011 թվականի համար գույքահարկի արտոնություններ սահմանել ֆիզիկական անձանց՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Անտոնյան Ս. | | |
| Ավագյան Ս. | | |
| Ավդալյան Լ. | | |
| Բաղդասարյան Մ. | | |
| Իսրայելյան Է. | | |
| Հարությունյան Լ. | | |
| Ղազարյան Է. | | |
| Մարգարյան Ռ. | | |
| Շիրվանյան Գ. | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ԹԻՎ 109 -Ա ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | ՀՎՀՀ | Սոց. քարտ | Ազգանուն, անուն | Հասցեն | Հարկի նվազեցում | ՈՒՄ նախաձեռնությամբ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2011թ.արտոն. չափը | |
| *Գույքահարկ շինությունների գծով* | | | | | | |
| 1 | 10902747 | 1305370295 | Սահակյան Կորյուն | Սահմանապահների 2նրբ.44 | 4577 | Հանձնաժողով |
| 2 | 10902763 | | Սիրեկանյան Ալբերտ | Սահմանապահների 2նրբ.48 | 3111 | Հանձնաժողով |
| 3 | 10933695 | 2710270013 | Մարգարյան Վալոդյա | Հանրապետության 4նրբ. 8տ. | 2594 | Հանձնաժողով |
| 4 | 10920326 | 1115322095 | Գեղամյան Գեղամ | Մուրացանի 11տ. | 9520 | Հանձնաժողով |
| 5 | 49526071 | 3810730491 | Սահակյան Արսեն | Մյասնիկյան 22Ա տ. | 1869 | Հանձնաժողով |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» նոյեմբերի 2011 թվականի N 110 - Ա

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի քաղաքապետի 2009 թվականի փետրվարի 6-ի թիվ 23 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 958 զեկուցագիրը՝

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիրի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի «սոցիալական հատուկ արտոնություններ» 10 բաժնի 7 խմբի 1 դասի ծախսերի 4729 հոդվածի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Անտոնյան Ս.
Ավագյան Մ.
Ավդալյան Լ.
Բաղդասարյան Մ.
Իսրայելյան Է.
Հարությունյան Լ.
Ղազարյան Է.
Մարգարյան Ռ.
Շիրվանյան [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ԹԻՎ 110 -Ա ՈՐՈՇՄԱՆ

| N | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵ | ԳՈՒՄԱՐ (ԴՐԱՄ) |
|---|---|---|---|
| 1 | Բավական Ավետիսյան | Իսահակյան փ. 41 տ. | 90000 |
| 2 | Օքսաննա Ստեփանյան | Ջիվանու փ. 5 շենքի 13 բն. | 10000 |
| 3 | Սաթենիկ Թովմասյան | Թումանյան փ. 2 նրբ. 7 տ. | 25000 |
| 4 | Մայիս Սարգսյան | Աբովյան փ. 134 տ. | 10000 |
| 5 | Օլգա Հարությունյան | 39 փողոցի 1 նրբանցքի 3 տ. | 20000 |
| 6 | Դոնարա Արզարյան | Լերմոնտով փ. 42տ. | 15000 |